



ԱՊԱՐԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ

Հասցե. ՀՀ Արագածոտնի մարզ 3103,
ք.Ապարան, Բաղրամյան 26
Հեռ./ֆաքս +/ 0252/ 6 23 60
Էլ.փոստ aarhusaparan@mail.ru
Info_aparan@aarhus.am

ՀՀ փոխվարչապետ,
ՀՀ տարածքային կառավարման նախարար
Արմեն Գևորգյանին

Ապարանի Օրհուս կենտրոնի
համակարգող՝ Նատալյա Մանուկյանից

05.03.2014.

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն փոխվարչապետ.

Արագածոտնի մարզի Օհանավան և Կարբի համայնքների բնակիչները անհանգստացած են և իրենց մտահոգություն են հայտնում իրենց խնձորի այգիները սնուցող ռոտոգման ջրանցքի վրա նոր ՀԷԿ-ի կառուցման առնչությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը և հավաստի տեղեկատվության տրամադրումը՝ խնդրում եմ Ձեզ Ապարանի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.


1. Ի՞նչ աշխատանքներ են իրականացվում Արգնի-Շամիրամ դոտացիոն ջրանցքի վրա.
2. Նախատեսում է արդյո՞ք «ԳԱՀԱ Էներջի» ՍՊԸ-ն նշված համայնքների տարածքում ՀԷԿ-ի շահագործման աշխատանքների իրականացում.
3. Խնդրում ենք տրամադրել այդ աշխատանքների նախագծերի պատճենները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝  Նատալյա Մանուկյան

